

**ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԶԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ**

**«Գիտական և գիտատեխնիկական գործունեության
ենթակառուցվածքների պահպանում և զարգացում»**

2020-2022

**ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ
ԵՎ**

2020

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

Երևան - 2019թ.

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ.

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությունը՝ որպես Չափագիտության ազգային մարմին, իրեն վերապահված իրավասությունների շրջանակում չափագիտության բնագավառում իրականացնում է պետական քաղաքականություն:

Ընկերության կազմում գործում է Արագածի գիտական բաժինը (ԱԳԲ), որտեղ դեռևս 1972թ.-ից ստեղծվել և մինչ օրս պահպանվում են տարբեր նշանակության անտենային համակարգեր, այդ թվում նաև՝ անտենային և փուլային էտալոններ, որոնք տեղադրված են իրենց համար նախատեսված հատուկ շինություններում ու միջավայրում և իրենցից ներկայացնում են բարդ ռադիոտեխնիկական սարքավորումներ:

Այս անտենային համակարգերը համարվում են պետական էտալոններ և իրենցից ներկայացնում նորագույն տեխնոլոգիայով պատրաստված զգայուն և բարձր ճշտություն ունեցող գիտական սարքերի համակարգեր, որոնց կազմում գործում են բարձրակայուն գեներատորներ, զգայուն ընդունիչներ, կառավարման համակարգեր, համակարգիչներ, հատուկ շենք-շինություններ, աշտարակներ, ինչպես նաև՝ մեծ հողային տարածք ունեցող որակավորված փորձադաշտեր: Այս բոլորը ենթակա են պահպանման և զարգացման՝ օգտագործելով ժամանակակից էլեմենտային բազան:

Նախորդող միջնաժամկետ հատվածում (2017-2019թթ.) «Անտենային էտալոնների պահպանումը և զարգացումը» ծրագրի շրջանակներում կատարվել են 0,5-2մ տրամագծով անտենաների չափման և հավաստագրման արդիական մեթոդների ուսումնասիրություն և ԳԷՊԻ-0,5; ԳԷՊԻ-1; ԳԷՊԻ-2 էտալոնային համակարգերի վերականգնում, արդիականացում և էտալոնների ամբողջական աշխատունակության ապահովում: Նպատակն է՝ ստանալ գերբարձր հաճախականության (գբհ) անտենաների պարամետրերի չափումների միասնականության ապահովումը՝ բարձր ճշտությամբ:

Համակարգի աշխատունակությունն ապահովելու նպատակով 2017-2019թթ. կատարվել են ներքոհիշյալ աշխատանքները.

Ստուգվել է առաջնային և երկրորդային անտենաների տեխնիկական վիճակը, վերականգնվել են անտենաների օպտիկական կարգաբերման համակարգերը: Օպտիկական մեթոդով ստուգվել է ճառագայթիչի և անտենայի գլխավոր առանցքի համաառանցքականությունը՝ ճառագայթող և ընդունող անտենաների համար:

Վերականգնվել և փորձարկվել է էտալոնային համակարգի էտալոն-վկայի պաշտպանական ծածկի շարժողական մեխանիզմը:

Կատարվել է էտալոն-վկայի սպասարկող հարթակի բարձրացման շարժիչի մեխանիզմի վերանորոգում:

Մշակվել և պատրաստվել է ելքում ավելի փոքր աղմուկներով նոր նախաուժեղարարի սխեմա, որի օգտագործումը հնարավորություն կտա մեծացնել անտենային կոմպլեքսով կատարվող չափումների դինամիկ դիապազոնը:

Միևնույն ժամանակ կատարվել են նոր նախաուժեղացուցչի փորձարկումները լաբորատոր պայմաններում, որտեղ հաղորդող ռուպորային Պ6-23P անտենան հաղորդիչ է, իսկ Պ6-14 ռուպորային անտենան՝ ընդունիչ: Արդյունքում ստացվել են ընդունող անտենայի ճառագայթման դաշտի ուղղվածության մի շարք դիագրամաներ: Ստացված դիագրամաները ցույց տվեցին, որ նոր նախաուժեղացուցչի աղմուկների մակարդակը նախորդ ուժեղացուցչի հետ համեմատած 4 ԴԲ ցածր է: Դա հնարավորություն է տալիս մեծացնել ԳԷՊԻ-1 անտենայի չափումների դինամիկ դիապազոնը:

Կատարվել են ԳԷՊԻ-2 էտալոնային համակարգի պլանային չափումներ՝ նոր նախաուժեղարարի կիրառմամբ: Չափման ընթացքում հայտնաբերվեցին մի շարք թերություններ.

ա.) Ընդունող ԳԷՊԻ-2 անտենայի ճառագայթիչը շեղված է, կատարվել են անհրաժեշտ ճշգրտումներ:

բ.) Ի հայտ եկան սնուցող մալուխների վնասվածքներ, որոնք առաջանում են շարժման ժամանակ. կատարվել է մալուխների ժամանակավոր վերականգնում, որոնք հետագայում ենթակա են փոխարինման:

գ.) Վնասվել է ԳԷՊԻ-2 աշտարակի վերին մասում գտնվող անտենայի տեղադրման համար նախատեսված օժանդակ հարթակի վերամբարձ մեխանիզմը, փոխարինվել է վնասված մեխանիկական շղթան:

Կատարվել են ԳԷՊԻ-0.5 էտալոնով չափումներ լրիվ ավտոմատ ռեժիմում:

Կատարվել են նոր տիպի անտենաների նախագծման աշխատանքներ. աշխատանքների արդյունքներից ներկայացվել է 3 զեկույց «IRFE-2018» միջազգային գիտաժողովում (Ադվերան, սեպտեմբերի 19-21, 2018թ.).

1. N. Khachatryan, R. Ter Antonyan - Simple Formulae a United Character Simplifying the Radiophysical Design of Dual-Reflector Axisymmetric Antennas with a Given Polar Equation of the Generatrix of the Main Reflector.

2. R. Ter Antonyan - A New Reflector Antenna Having Switchable Beamwidth at Operating Frequency.

3. R. Ter Antonyan - To the Development of a Feed for a Dual-Reflector Radio Telescope with a Fixed Hemispherical Main Reflector and a Movable Subreflector of the Gregory Type.

Մտավոր սեփականության գործակալության կողմից 15.06.18թ. որոշում է կայացվել հատկացնել գյուտի արտոնագիր «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված «Հայելային առանցքային համաչափությամբ ալեհահավաք» աշխատանքին (Ռուբեն Տեր Անտոնյան, Նորայր Խաչատրյան՝ «Հայելային առանցքային համաչափությամբ ալեհահավաք». ԱՐՏՈՆԱԳԻՐ՝ No 521Ս, հայտ՝ No AM20180022Ս, 16.06.2016.(20), 2018թ.):

«Մթնոլորտի և ջերմային ճառագայթման աղբյուրների ֆիզիկական բնութագրերի չափումների չափագիտական ապահովման մեթոդների ուսումնասիրություն և մշակում» ծրագրով նախատեսվում է ինֆրակարմիր ճառագայթման աղբյուրներից մթնոլորտ արտանետվող տաք գազային զանգվածների, ինչպես նաև տարբեր տարածքներում և ծավալներում աերոզոլային մասնիկների ֆիզիկա-էկոլոգիական պարամետրերի օպտիկա-էլեկտրոնային չափումների չափագիտական ապահովության մեթոդների ուսումնասիրում և մշակում:

Մթնոլորտի բնապահպանական պարամետրերի տեսական հետազոտությունների բնագավառում իրականացվել են շրջակա միջավայրում աերոզոլային մասնիկների խտությունների և չափսերի չափման համար նախագծված «Մասնիկ-Ա» աերոզոլային սպեկտրաչափի չափագիտական ատեստավորման մեթոդիկայի և ծրագրի մշակման աշխատանքները:

Կատարվել է նաև մթնոլորտ արտանետված տաք գազային զանգվածների, ինչպես և ջերմային աղբյուրների ֆիզիկա-էկոլոգիական պարամետրերի չափումների նպատակով մշակված ունիվերսալ ինֆրակարմիր սպեկտրոռադիոմետրի մետրոլոգիական բնութագրերի տեսական հետազոտությունների մեթոդների մշակում:

Մշակվել են լավագույն չափագիտական պարամետրեր ունեցող օպտիկա-էլեկտրոնային սարքավորումներով մթնոլորտում գազա-աերոզոլային աղտոտվածության հսկողության մեթոդները:

Կատարվել են ունիվերսալ սպեկտրալ ռադիոմետրի չափագիտական պարամետրերի որոշման մեթոդիկաների տեսական հետազոտություններ:

Քանի որ մթնոլորտում աշխատող բոլոր սարքեր-սարքավորումների համար չափագիտական տեսանկյունից անհրաժեշտ են մթնոլորտային գազերի լուսացրման

հատկությունները, մշակվել է «մաքուր գազերի լուսացրման հետազոտություններ» նոր փորձարարական մեթոդը:

Զգալի աշխատանքներ են կատարվել տեսական հետազոտությունների բնագավառում: Օպտիկա-էլեկտրոնային սարքավորումների լավագույն չափագիտական պարամետրեր ապահովելու նպատակով կատարվել է տեսական հետազոտություն՝ երկբևեռ կիսահաղորդչային սարքերի հենքի վրա մշակել բարձր զգայնության ֆոտոընդունիչ հանգույցներ. բերված է այդ նպատակին հասնելու տեսական հնարավորության հիմնավորումը:

Արդյունքները գիտական հոդվածի տեսքով տպագրվել են միջազգային գիտական ամսագրերում:

1. Ruben Asatryan, Norayr Khachatryan, Hamlet Karayan - The Theoretical Research Methodology of Metrological Parameters of Universal Spectral Radiometer. International Journal of Engineering Applied Sciences and Technology, 2018, vol.3, issue1, ISSN No.2455-2143, Pages 1-5. Published May 2018 in IJEAST (<http://www.ijeast.com//>).
2. Ruben Asatryan, Norayr Khachatryan, Hamlet Karayan - The Methods of Gaz-Aerazol Pollution Control in Atmosphere by Equipments with Best Metrological Parametres. International journal of Engineering Applied Sciences and Technology, 2018, Vol. 3, issue 3, ISSN No. 2455-2143, Pages 22-25. Published July 2018 in IJEAST (<http://www.ijeast.com//>).
3. Р.С. Асатрян, Г.С. Караян, Н.Р. Хачатрян - Методика Метрологической Аттестации Оптико-Электронного Измерителя Аэрозольных Частиц в Окружающей Среды. Colloquium-Journal ISSN 2520-6990, №3 (14) (2018).
4. Р.С.Асатрян, Н.Р.Хачатрян, Г.С.Караян - Оптическая Градуировка и Метрологическая Аттестация Измерителя Прозрачности Атмосферы. PHYSICO-MATEMATICAL SCIENCES «Colloquium Journal» #9.
5. Ruben Austrian, Norayr Khachatryan, Hamlet Karayan - Theoretical Grand of Creation of flighly Sensitivety Photodetector Basis on Multistable Senicon-ductor Structure, Intern. Journ. Of Engi. Appl. Sci. and Technol., 2018, Vol. 3, Issue5., pages 1-4.
6. Р.С.Асатрян - Об одном методе исследований молекулярного светорассеяния чистых газов, Вестник НПУА Армении, Электротехника, Энергетика, №2, Ереван. 2018.
7. Асатрян Р.С., Хачатрян Н.Р., Караян Г.С., Об одном методе дистанционного инфракрасного мониторинга. "Colloquium - journal" #13(24), 2018/ Technical science.

Նախորդող միջնաժամկետ հատվածում (2017-2019թթ.) կատարվել են և նախատեսվում է կատարել հետևյալ ֆինանսական ծախսերը.

2017թ. կատարված փաստացի ֆինանսական ծախսերն են (01.01.17 – 31.12.17).

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԵՐ՝ 48527,0 հազար դրամ, այդ թվում՝

1. Աշխատավարձ՝ 30000,0 հազար դրամ:

Աշխատանքներին մասնակցել է **21** մարդ:

2. ԳԷՊԻ-0,5; ԳԷՊԻ-1; ԳԷՊԻ-2 էտալոնների վերականգնման, արդիականացման և պահպանման ծախսեր՝ 18527,0 հազար դրամ, այդ թվում՝

- ✓ Նյութեր, ռադիոդետալներ, գործիքներ, լաբորատոր գույք, շինանյութ, շինարարական աշխատանքներ՝ **4584,0** հազար դրամ,
- ✓ Սարքավորումներ՝ **10020,0** հազար դրամ,
- ✓ Կոմունալ ծախսեր՝ **1843,0** հազար դրամ,
- ✓ Հողի հարկ (Արագածի գիտական կենտրոնի)՝ **272,0** հազար դրամ,
- ✓ Գույքահարկ (Արագածի գիտական կենտրոնի)՝ **1200,0** հազար դրամ,
- ✓ Տրանսպորտային ծախսեր՝ **608,0** հազար դրամ:

2018թ. կատարված փաստացի ֆինանսական ծախսերն են (01.01.18 – 31.12.18).

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԵՐ՝ 44 226.0 հազար դրամ, այդ թվում՝

1. Աշխատավարձ՝ 40 000.0 հազար դրամ:

Աշխատանքներին մասնակցել է **28** մարդ:

2. Անտենային էտալոնների պահպանում և զարգացում ՝ 4226.0 հազար դրամ, այդ թվում՝

- ✓ Կոմունալ ծախսեր՝ **2154.0** հազար դրամ,
- ✓ Հողի հարկ (Արագածի գիտական կենտրոնի)՝ **272.0** հազար դրամ,
- ✓ Գույքահարկ (Արագածի գիտական կենտրոնի)՝ **1200.0** հազար դրամ,
- ✓ Տրանսպորտային ծախսեր (Երևան-ԱԳԿ) **600.0** հազար դրամ:

2019թ. նախադրեսվող ֆինանսական ծախսերն են (01.01.19 – 31.12.19).

**2019թ. ծախսերի նախահաշվի աղյուսակ
«Գիտական և գիտատեխնիկական ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում»
ծրագրի**

(հազար դրամ)

N	Ծախսերի անվանումը	Ընդամենը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ	Առաջին կիսամյակ	9 ամիս	տարի
1	Աշխատավարձ (27 մարդ)	40 000,0	9 000,0	19 000,0	29 000,0	40 000,0
2	ԳԷՊԻ-0,25; ԳԷՊԻ-0,5 ; ԳԷՊԻ-1; ԳԷՊԻ-2 էտալոնների վերականգնման, արդիականացման և պահպանման ծախսերը, այդ թվում՝	5 000,0	—	1 250,0	2 500,0	5 000,0
2.1	Նյութեր, ռադիոդետալներ, գործիքներ, լաբորատոր գույք, շինանյութ, շինարարական աշխատանքներ	1 000,0	—	250,0	500,0	1 000,0
2.2	Կոմունալ ծախսեր (էլ. էներգիա և ջուր)	1 728, 0	—	432,0	864,0	1 728, 0
2.3	Հողի հարկ՝ Արագածի գիտական կենտրոնի (չի հարկվում)	272, 0	—	68,0	136,0	272, 0
2.4	Գույքահարկ՝ Արագածի գիտական կենտրոնի (չի հարկվում)	1 200,0	—	300,0	600,0	1 200,0
2.5	Տրանսպորտային ծախսեր՝ Երևան-ԱԳԿ (Օրգով)	800,0	—	200,0	400,0	800,0
3	ԱԱՀ	9 000,0	1 800,0	4 500,0	6 300,0	9 000,0
Ընդամենը		54 000,0	10 800,0	24 300,0	37 800,0	54 000,0

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ.

«Վազային էտալոնների պահպանությունը, արդիականացումը և զարգացումը հնարավորություն կտան ապահովելու էտալոնների օգտագործումը ներկա գիտատեխնիկական պահանջներին համահունչ՝ դրանք համապատասխանեցնելով

միջազգային ստանդարտներին: Էտալոններն ունեն անմիջական կիրառական նշանակություն և թույլ են տալիս բարձրացնելու անտենային չափումների ճշտությունը, հավաստիությունը և միասնականությունը:

Անտենաների չափագիտությունը բնութագրերի չափման միասնականությունը և ճշտությունն ապահովող արդի գիտատեխնիկական ուղղություն է:

Անտենաների չափագիտության զարգացումը ՀՀ-ում հնարավորություն կտա ուսումնասիրել և լուծել ներկա պայմաններում անընդհատ բարդացող էլեկտրամագնիսական համատեղելիության խնդիրները:

Անտենաների կողմից տարածության մեջ ձևավորված էլեկտրամագնիսական դաշտը նկարագրվում է բազմաթիվ բնութագրերով. բաշխվածությունն՝ ըստ ուղղությունների՝ ճառագայթի լայնություն, ուժեղացման գործակից, բևեռացում և այլն: Անտենաների բնութագրերը նույնն են հաղորդման և ընդունման ռեժիմներում:

Ծրագրի իրականացումը կապված է ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրերում ամրագրված ընդհանուր տնտեսական խնդիրների և նպատակների հետ:

Ծրագրի խնդիրներն են՝ Հայաստանի չափագիտական սպասարկման որակի և տեխնիկական մակարդակի բարձրացումը, նոր չափման մեթոդների և համակարգերի մշակումն ու ներդրումը, գիտական հետազոտությունների, ինչպես նաև՝ ԿՕՕՄԵՏ եվրասիական երկրների չափագիտության ինստիտուտների և ՀՀ գիտական կենտրոնների հետ միջինստիտուտային կոլաբորացիաներ ապահովելու համար համապատասխան նյութատեխնիկական բազայի ստեղծումը, տրամաչափարկման և էտալոնային կարողությունների, «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության աշխատակիցների տեխնիկական մտածողության մակարդակի բարձրացումը և նրանց մասնագիտական որակները լիարժեք իրագործելու հնարավորության ապահովումը:

Ազգային էտալոնները ՀՀ կառավարության 15.06.1998թ. N-331 որոշմամբ ազգային հարստություն են. դրանք ենթակա են պահպանության և վերազինման:

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները				Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ	
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը		Ժամկետը
Գիտական և գիտատեխնիկական ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում	01/04/01 Անտենային էտալոնների պահպանումը և զարգացումը	ՉԱԻ-ում պահպանվող ալեհավաքների էտալոններն իրենցից ներկայացնում են բարդ ռադիոտեխնիկական սարքերի համակարգեր: Չափման ճշտությունները պահպանելու և բարձրացնելու համար անհրաժեշտ է պարբերաբար կատարելագործել սարքավորումները՝ հաշվի առնելով ալեհավաքների պարամետրերի չափման զգայնությունների բարձրացման արդի աճող պահանջները:	Օգտագործել նախկինում ստեղծված ԳԷՊԻ-0,5; ԳԷՊԻ-1; ԳԷՊԻ-2 էտալոնային համակարգերը:	2019թ.	Պահպանել և զարգացնել ԳԷՊԻ-0,5; ԳԷՊԻ-1; ԳԷՊԻ-2 էտալոնները, բարձրացնել չափման զգայնությունները, մշակել դաշտի բաշխվածությունների արդյունքներում շտկումներ մտցնելու նոր մեթոդներ՝ կախված պարագիտային անդրադարձումներից:	2022թ.	ՉԱԻ ՓԲԸ-ն սահմանվում է ՀՀ կառավարության կողմից և իրեն վերապահված իրավասությունների շրջանակում չափագիտության բնագավառում իրականացնում պետական քաղաքականություն:

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ.

Ոլորտային քաղաքականության նպատակների և թիրախների ապահովման համար ՄԺԾԾ ժամանակահատվածում «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության կողմից իրականացվող հիմնական ծախսային ուղղությունն անտենային էտալոնների պահպանումը և զարգացումն է:

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման).	Հիմնավորումներ
ԳԷՊԻ-0,25; ԳԷՊԻ-0,5; ԳԷՊԻ-1; ԳԷՊԻ-2 էտալոնային համալիրների պահպանում և զարգացում:	<p><i>Էտալոններն իրենցից ներկայացնում են բարդ ռադիոտեխնիկական սարքերի համակարգեր:</i></p> <p>Կատարման ենթակա միջոցառումների նպատակն է՝ ապահովել չափումների միասնականությունը: Չափման ճշտությունները պահպանելու և բարձրացնելու համար անհրաժեշտ է պարբերաբար կատարելագործել սարքավորումները՝ հաշվի առնելով ավեհավաքների պարամետրերի չափման զգայնությունների բարձրացման արդի աճող պահանջները: «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությունը՝ որպես Չափագիտության ազգային մարմին, իր առաքելության իրականացման համար ստանում է պետական ֆինանսավորում («ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱ-ՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի հոդված 26):</p>

Ի լրումն վերոհիշյալ տեղեկատվության՝ ՄԺԾԾ հատվածում «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության ներքո գտնվող բնագավառի գծով կառավարության ծախսային քաղաքականության հակիրճ շարադրանքը ներկայացված է սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 12-ի ձևաչափին համապատասխան (տես, ՄԱՍ 3-ի հավելված 12-ը):

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ.

4.1. Պարտադիր ծախսերը.

ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք պարտադիր ծախսային ծրագիրը «ԳԷՊԻ-0,25; ԳԷՊԻ-0,5; ԳԷՊԻ-1; ԳԷՊԻ-2 էտալոնային համալիրների պահպանում և զարգացում»-ն է:

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությունն իր առաքելությունն իրականացնելու համար եկող տարի կարող է ֆինանսավորվել նույնչափ գումարով, ինչ 2019 թվականին: Ֆինանսավորման դեպքում ընկերության էտալոնների բաժնի կողմից հստակ

կիրագործվեն պարտադիր պարտավորությունների շրջանակում այնպիսի աշխատանքներ, որոնց արդյունքները համահունչ կլինեն էտալոնային ալեհավաքների չափման զգայնությունների բարձրացման արդի աճող պահանջներին, կնպաստեն չափումների միասնականության ապահովմանը: Ստացված ֆինանսավորումը պետք է ապահովի գիտական և սպասարկող անձնակազմի աշխատավարձը, ընկերության հարկային պարտավորությունները, կոմունալ ծախսերը և անհրաժեշտ նյութերի ու գործիքների ձեռքբերումը:

Ծախսային ծրագիրը հնարավորություն կտա.

✓ Ապահովել Արագածի գիտական բաժնում գոյություն ունեցող ենթակառուցվածքների պահպանումը և զարգացումը:

✓ Պատրաստել ԳԷՊԻ-0,25 էտալոնի (0,4-0,75)մ տրամագծով ալեհավաքների չափման համար նախատեսված 0,25մ բացվածքով ռուպորային անտենա:

✓ Ապահովել ԳԷՊԻ-0,25 էտալոնի, ինչպես նաև՝ ԳԷՊԻ-0,5; ԳԷՊԻ-1; ԳԷՊԻ-2 էտալոնների անխափան աշխատանքը: Այս նպատակի համար սահմանել խստագույն հսկողություն չափագիտական, ստուգողական և պահպանման աշխատանքներում:

✓ Հետազոտել բոլոր հանգույցներից բխող չափումների պատահական և սխտեմիկ սխալները, հաշվառել դրանք, գնահատել և վերացնել, ինչպես նաև՝ անընդմեջ կատարելագործել էտալոնների բնութագրերը տեսական և փորձարարական հետազոտությունների միջոցով, բարձրացնել էտալոնների ճշտությունը՝ գիտության և արտադրության ներկա պահանջները բավարարելու համար:

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները.

Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է սույն մեթոդական ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 1-ով սահմանված «Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների ամփոփ ձևաչափին» համապատասխան:

Գոյություն ունեցող ծրագրի/միջոցառման (ծախսային պարտավորությունների) գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսերն ու ակնկալվող արդյունքներն ամփոփ տեսքով ներկայացված են սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 3-ի ձևաչափին համապատասխան:

Նշված ծրագրի/միջոցառման գծով ծախսերն՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգումների մանրամասների ներկայացված են սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելվածներ 4-ի և 5-ի ձևաչափերին համապատասխան:

4.3. Նոր նախաձեռնությունները.

Նոր նախաձեռնությունները բացակայում են, հետևաբար համապատասխան աղյուսակները չեն լրացվում:

5. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ.

Ոչ բյուջետային աղբյուրներից սպասվող եկամուտները բացակայում են, հետևաբար համապատասխան աղյուսակները չեն լրացվում:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.

Տարածքային զարգացմանն առնչվող ծրագրեր/միջոցառումներ չեն կանխատեսվում, հետևաբար համապատասխան աղյուսակները չեն լրացվում:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.

Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրերը/ միջոցառումները բացակայում են, հետևաբար համապատասխան աղյուսակները չեն լրացվում:

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ.

2020-2022թթ. ժամանակահատվածի համար «Չափազիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության պատասխանատվության ներքո գտնվող բնագավառի գծով ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 10-ի ձևաչափին համապատասխան:

9. ՄԺԾԾ ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ.

N	Ռիսկի նկարագրությունը	Երևույթի հանդես գալու հավանականությունը	Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա	Ռիսկի կանխման/ հաղթահարման հնարավոր ուղիները
1	Ֆինանսատնտեսական ճգնաժամ	—	Ֆինանսատնտեսական ճգնաժամը կբերի գիտատեխնիկական հետազոտությունների նվազմանը:	Կիրառել ռազմավարական մենեջմենթի սկզբունքը, ապահովել տվյալ ծրագրի իրականացումը ընկերության շահութաբերության օպտիմիզացիայի շնորհիվ:

ՄԱՍ 3. ՄԺԾ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված N 1

Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների ամփոփ ձևաչափ.

Աղյուսակ 1. Ծրագիրը, միջոցառումը և ծախսերի օբյեկտները.

Ծրագիրը՝	01/04/01, «Անտենային էտալոնների պահպանումը և զարգացումը»
Միջոցառումը՝	«Կատարման ենթակա գործառույթներ»
Միջոցառման հիմքում դրված ծախսային պարտավորության բնույթը՝	Արագածի գիտական կենտրոնում պահպանվող էտալոնային համակարգերի և դրանց ենթակառուցվածքների պահպանման և զարգացման պարտավորություններ

Աղյուսակ 1. Ծախսերի վրա ազդող ծախսային գործոնները.

Ծախսային գործոնը և սպառվող (ծախսվող) ռեսուրսը	Գործոնի տեսակը	Չափի միավորը	Ստանդարտի (նորմատիվի) առկայությունը	Գործոնի կամ ռեսուրսի սպառման (ծախսման) մակարդակը					Հիմնավորումներ/ Պատճառներ
				2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.	
Գնային և ոչ գնային գործոններ՝									
Աշխատավարձ	Քանակական	1000 դրամ	—	40 000,0	48 000,0	48 000,0	48 000,0	48 000,0	Աշխատավարձի աճը պայմանավորված է ԱԱՀ գումարմամբ:
Կոմունալ ծախսեր, հարկեր և տրանսպորտային ծախսեր	Քանակական	1000 դրամ	—	5 000,0	4 800,0	4 800,0	4 800,0	4 800,0	Ծախսերի աճը պայմանավորված է ԱԱՀ գումարմամբ:
Սարքավորումներ, ռադիոդետալներ, նյութեր և այլն	Քանակական	1000 դրամ	—	—	1 200,0	1 200,0	1 200,0	1 200,0	Ծախսերի աճը պայմանավորված է ԱԱՀ գումարմամբ:

Հավելված 3-ը կից ներկայացված է Excel ձևաչափով:

Հավելված N 4

Բյուջետային ծրագրերի գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների.

Ծրագրային դասիչը	Ծրագիր / Միջոցառում	2018թ փաստ. (հազ. դրամ)				2019թ սպասվող (հազ. դրամ)				2020թ բյուջե (հազ. դրամ)				2021թ և 2022 բյուջե (հազ. դրամ)			
		Ընդամենը	Աշխատավարձ	Կոմունալ ծախսեր, հարկեր	Այլ ծախսեր	Ընդամենը	Աշխատավարձ	Կոմունալ ծախսեր, հարկեր	Այլ ծախսեր	Ընդամենը	Աշխատավարձ	Կոմունալ ծախսեր, հարկեր	Այլ ծախսեր	Ընդամենը	Աշխատավարձ	Կոմունալ ծախսեր, հարկեր	Այլ ծախսեր
01/04/01	«Անտենային էտայլոնների պահպանումը և զարգացումը»	44 226,0	40 000,0	4 226,0	-	54 000,0	48 000,0	4 800,0	1 200,0	54 000,0	48 000,0	4 800,0	1 200,0	54 000,0	48 000,0	4 800,0	1 200,0

Բյուջետային ծրագրերի գծով ծախսերի բաշխումն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման տարրերի.

Ծրագրային դասիչը	Ծրագիր /Միջոցառում	Գործառական դասակարգման			2018թ փաստ. (հազ. դրամ)	2019թ սպասվող (հազ. դրամ)	2020թ բյուջե (հազ. դրամ)	2021թ բյուջե (հազ. դրամ)	2022 թ բյուջե (հազ. դրամ)
		Բաժին	Էտամբ	Դաս					
01/04/01	«Անտենային էտալոնների պահպանումը և զարգացումը»	X	X	X	44 226,0	54 000,0	54 000,0	54 000,0	54 000,0

Ամփոփ ֆինանսական պահանջներ ՄԺԾԾ ժամանակահատվածի համար.

Աղյուսակ 2. Հայտով ներկայացված՝ 2020-2022թթ ընդհանուր ծախսերի համեմատությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի և 2019-2021թթ. ՄԺԾԾ հետ.

(հազար դրամներով)

	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
1. Պետական մարմնի գծով 2019-2020 ՄԺԾԾ-ով հաստատված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման ընդհանուր կողմնորոշիչ չափաքանակները:	X	54 000,0	54 000,0	54 000,0
2. <<<< 2019թ. պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով պետական մարմնի գծով սահմանված ընդհանուր հատկացումները:	54 000,0	X	X	X
3. Ընդամենը հայտով ներկայացված ընդհանուր ծախսերը՝ 2020-2022 թթ. ՄԺԾԾ համար (տող 3.1 + տող 3.2 + տող 3.3.):	X	54 000,0	54 000,0	54 000,0
3.1 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գնահատում 2020-2022 թթ. ՄԺԾԾ համար (առանց ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկների ներառման):	X	54 000,0	54 000,0	54 000,0
3.2 Ծախսային խնայողությունների գծով առաջարկները (-) նշանով:	X	-	-	-
3.3 Նոր նախաձեռնությունների գծով ընդհանուր ծախսերը:	X	-	-	-
4. Տարբերությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի համապատասխան ցուցանիշից (տող 3 - տող 2):	X	-	-	-
5. Տարբերությունը 2019-2020 ՄԺԾԾ-ով հաստատված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներից (տող 3-տող 1):	X	-	-	-

**ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

1. ՈԼՈՐՏԸ.

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությունը՝ որպես Չափագիտության ազգային մարմին, սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից և իրեն վերապահված իրավասությունների շրջանակում չափագիտության բնագավառում իրականացնում պետական քաղաքականություն:

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության կազմում գործում է Արագածի գիտական բաժինը (ԱԳԲ), որտեղ դեռևս 1972թ.-ից ստեղծվել և մինչ օրս պահպանվում են տարբեր նշանակության անտենային համակարգեր, այդ թվում նաև՝ անտենային և փուլային էտալոններ: Այս անտենային համակարգերը համարվում են պետական էտալոններ և իրենցից ներկայացնում նորագույն տեխնոլոգիայով պատրաստված զգայուն և բարձր ճշտություն ունեցող գիտական սարքերի համակարգեր, որոնց կազմում գործում են բարձրակայուն գեներատորներ, զգայուն ընդունիչներ, կառավարման համակարգեր, համակարգիչներ, հատուկ շենք-շինություններ, աշտարակներ, ինչպես նաև՝ մեծ հողային տարածք ունեցող որակավորված փորձադաշտեր: Այս բոլորը ենթակա են պահպանման և զարգացման՝ օգտագործելով ժամանակակից էլեմենտային բազան:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆՆԵՐԸ.

Ինչպես գիտենք, առաջիկա հինգ տարիներին՝ ՀՀ կառավարության գործունեությունը միտված է լինելու Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական, ինչպես նաև բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող, արտահանմանը միտված մրցունակ և ներառական տնտեսություն կառուցելուն: Այս նպատակին հասնելու համար առանցքային նշանակություն ունեցող կետերից է մարդու իրավունքների պաշտպանվածությունը, մարդու ազատ ստեղծագործելու, արժանապատիվ ու երջանիկ ապրելու համար նպաստավոր պայմանների ապահովմամբ՝ բարեկեցության մակարդակի շարունակական բարձրացումը:

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությունը ՀՀ տարածքում ապահովում է չափումների միասնականությունը, որն էլ ազգային տնտեսության որակի ենթակառուցվածքի հենքային սյունն է: Հարկ են համարում շեշտել, որ հատկապես օրենսդրական չափագիտությունը (չափագիտության ուղղություններից է) ոչ միայն ապահովում է ՀՀ քաղաքացիների անվտանգությունն առողջապահական տեսանկյունից, այլև կարգավորում է սպառող-վաճառող առևտրային հարաբերությունները: Մինևույն ժամանակ Չափումների միասնականության համակարգի պատշաճ գործունեության արդյունքում հնարավոր է զարգացնել ՀՀ

առաջարկած արտադրանքի միջազգային մակարդակին համապատասխանող որակական բնութագրերը, ինչն էլ կխթանի առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացմանը, այսինքն՝ մեր արտադրողները կդառնան մրցունակ միջազգային մակարդակում: Իսկ օրենսդրական չափագիտության գործառույթների արդյունքների բարձր մակարդակի և որակի ապահովման համար հարկավոր է ունենալ լուրջ գիտական հիմքեր: Նշենք, որ 2004թ.-ից ի վեր «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության անձնակազմն օրենսդրական չափագիտությանը զուգահեռ հիմնել, բարելավել և զարգացրել է ՀՀ-ում չափագիտության գիտական և տեսական հիմքերը՝ դրանք հնարավորինս ներդաշնակեցնելով միջազգային լուրջ և հիմնարար չափագիտական կազմակերպությունների առաջադրած պահանջներին և որակին:

Այսպիսով, փաստենք՝ չափագիտությունը, լինելով գիտություն չափումների և դրանց կիրառման մասին, էական դեր է խաղում մարդու կյանքում: Չափում կատարելու անհրաժեշտություն զգացվում է յուրաքանչյուր քայլափոխի՝ սկսած սնունդ գնելիս, ծախսած էլեկտրաէներգիայի քանակից մինչև գիտական ամենաբարդ հետազոտությունները: Եվ պատահական չէ, որ չափումներն ունեն առաջնային նշանակություն արտաքին և ներքին առևտրի համար, արտադրանքի որակի ապահովման, նոր տեխնոլոգիաների ներդրման, աշխատանքի անվտանգության ապահովման և այլնի համար:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությունը՝ որպես Չափագիտության ազգային մարմին, իր առաքելությունն իրականացնելու համար եկող տարի կարող է ֆինանսավորվել նույնչափ գումարով, ինչ 2019 թվականին: Ֆինանսավորման դեպքում ընկերության էտալոնների բաժնի կողմից հստակ կիրազորվեն պարտադիր պարտավորությունների շրջանակում այնպիսի աշխատանքներ, որոնց արդյունքները համահունչ կլինեն էտալոնային ալեհավաքների չափման զգայնությունների բարձրացման արդի աճող պահանջներին, կնպաստեն չափումների միասնականության ապահովմանը: Ստացված ֆինանսավորումը պետք է ապահովի գիտական և սպասարկող անձնակազմի աշխատավարձը, ընկերության հարկային պարտավորությունները, կոմունալ ծախսերը և անհրաժեշտ նյութերի ու գործիքների ձեռքբերումը:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ.

ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք գերակա ծախսային ծրագիրը՝ «ԳԷՊԻ-0,25; ԳԷՊԻ-0,5; ԳԷՊԻ-1; ԳԷՊԻ-2 էտալոնային համալիրների պահպանում և զարգացում», հնարավորություն կտա ապահովել Արագածի գիտական բաժնում գոյություն ունեցող ենթակառուցվածքների անխափան աշխատանքը, հետազոտել բոլոր հանգույցներից բխող չափումների պատահական և սխտեմիկ սխալները, հաշվառել դրանք, գնահատել և վերացնել, ինչպես նաև անընդմեջ կատարելագործել էտալոնների բնութագրերը տեսական և փորձարարական հետազոտությունների միջոցով, բարձրացնել էտալոնների ճշտությունը՝ գիտության և արտադրության ներկա պահանջները բավարարելու համար:

Նախահաշիվ 2020-2022թթ.

«Գիտական և գիտատեխնիկական ենթակառուցվածքների պահպանում (Արագածի գիտական կենտրոն) և զարգացում ծրագրի» ծախսերի

ՀՀ	Ծախսերի անվանումը	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
1	Աշխատավարձ (27 մարդ)	48 000,0	48 000,0	48 000,0	48 000,0
2	Անտենային էտալոնների պահպանում և զարգացում, այդ թվում՝	6 000,0	6 000,0	6 000,0	6 000,0
2.1	Սարքավորումներ, նյութեր, ռադիոդետալներ, գործիքներ, լաբորատոր գույք, շինանյութ, շինարարական աշխատանքներ	1 200,0	1 200,0	1 200,0	1 200,0
2.2	Կոմունալ ծախսեր (էլ. էներգիա և ջուր)	2 368,0	2 368,0	2 368,0	2 368,0
2.3	Հողի հարկ	272,0	272,0	272,0	272,0
2.4	Գույքահարկ	1 200,0	1 200,0	1 200,0	1 200,0
2.5	Տրանսպորտային ծախսեր	960,0	960,0	960,0	960,0
	Ընդամենը	54 000,0	54 000,0	54 000,0	54 000,0

«Չափագիտության ազգային ինստիտուտ»
ՓԲԸ գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝

ստորագրություն

ՀԱՅԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«Չափագիտության ազգային ինստիտուտ»
ՓԲԸ գլխավոր հաշվապահ՝

ստորագրություն

ՌՈՒԶԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ